կանով։ Հայ գիւղացիք այստեղ էլ, ինչպէս ամեն տեղ ունեն աշնանացան և գարնանացան — «Քիւզեան ու Բահերեան»։ Աշնանը նրանք ցանում են ցորեն և գարի, իսկ գարնանը՝ ցորեն (գարնանավար), հաճար, կորնկան, կտաւատ, արևածաղիկ, շավդաղ, եսնջա և այլն։ Հացահատիկները. — ցորեն, գարի, հաճարը — տալիս են սովորաբար մէկին 6, իսկ դէմինները՝ 1-ին 3 - 4։

Երկրագործութիւնը կատարւում է ընտանիքի իւրաքանչիւր անդամի մասնակցութեամբ, կանայք և փոքր աղջիկներն ևս շատ անգամ մասնակցում են այս աշխատութեան, որ բաժանւում է հետևեալ կերպով.

Վար։ Արօրով արտը հերկելու գործողութիւնը կոչւում է վար, որից յետոյ շուտով ցափում և ապա քարդու քաշում հեշտ ոռոգելու և աւելի ուժեղ աճեցման նպաստելու համար։

Ջրել, որի համար, ցանելուց յետոյ եթէ արտը հարթ տեղ է 7—8 քայլ լայնութեամբ ակօսներ են բանում և ջրում, իսկ եթէ արտը զառիվայրի վրայ է, երկու ոտ լայնութեամբ ոլոր-մոլոր ակօսներ են (քարդվար) բանում և ջրում։

Հունձ, (քաղ)։ Ցորենը քաղելու գործողութիւնը կոչւում է հունձ, որի համար հարկաւոր է մանգաղ. այն անձը, որ հնձում է, կոչւում է հնձող կամ քաղող, իսկ կապողը՝ խուրձ կապող։

Հնձած ցորենը նախ խուրձ են կապում, ապա բարձելով սայլին, տանում են կալը, որ գիւղին կից է գտնւում. դա բոլորակ շրջանակի ձև ունի, ուր ցորենը մանրացնում են կամով կամ չամով։ Կամը երկփեղկ տախտակներից միացած մի գործիք է, որի մէկ կողմը սուր գայլախազ քարերով ծածկւած է, ցորենը մանրելու համար, իսկ չամն ունի չորս անիւներ, որոնց վրայ շինւած են բոլորակ ձևով սուր երկաթէ օղակներն ածելու նման, որով ցորենը մանրացնում են։ Մանրած լարդախառն կոյտը կոչւում է փախաւա, որից